«ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ» ԵՎ «ԴԻԶԱՅՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Գծանկար առարկայի ներբուհական քննությունը անցկացվում է երկու օրում՝ 4-ական ժամ տևողությամբ:

Քննության առաջին օրը, քննաթերթում նշված ժամին, դիմորդը մասնաճյուղ է ներկայանում անձնագրով, ներբուհական քննության համար վճարված 1500 դրամի անդորագրով, բուհի կողմից դիմորդին տրամադրված քննաթերթով, ինչպես նաև քննության համար անհրաժեշտ գրենական պիտույքներով՝

1. նկարչական տախտակ A2 ֆորմատի թղթի համար,
2. A2 ֆորմատի նկարչական սպիտակ թուղթ (տրվում է մասնաճյուղի կողմից),
3. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների (օրինակ՝ H, HB, B),
4. Ռետին, սրիչ, կոճգամներ:

Դիմորդները քննասենյակներում իրենց տեղերը զբաղեցնում են վիճակահանությամբ: Առաջադրանքի կատարման համար նախատեսված երկրաչափական մարմիններից վիճակահանությամբ ընտրվում է 3 առարկա:

Երկրորդ օրվա քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում, ծածկագրվում են պատասխանատու քարտուղարի կողմից և հանձնվում առարկայական քննական հանձնաժողովի նախագահին՝ գնահատման համար: Քննական աշխատանքները ստուգվում և գնահատվում են հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

Գնահատման ավարտից հետո կատարվում է աշխատանքների ապաածածկագրում և գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ: Գնահատականները հրապարակվում են քննության ավարտելուց հետո՝ ժամը 18^{00}-ին:

Ստացած գնահատականի հետ անհամաձայնության դեպքում դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը ներբուհական գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը9^{00}-18^{00}–ի ընթացքում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի № 826 Ն որոշման: